«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 98 546 497
welcome@aybschool.am
www.aybschool.am

Արձանագրություն
№ ASBT06-2307-C (2809)

«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 6-րդ գումարման հոգաբարձուների խորհրդի նիստի

Ամսաթիվ՝	28 սեպտեմբերի 2023 թ.
Անցկացման վայր՝	«Այբ» դպրոց, ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11/ Zoom հարթակ
Նիստի սկիզբ՝	09:30

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հոգաբարձուների խորհրդի (ՀԽ) անդամներ՝
Ռուբեն Հարությունյան - ՀԽ նախագահ, (առցանց),
Աշոտ Մկրտչյան, (առցանց),
Արտավազդ Մինասյան, (առկա),
Դավիթ Փախչանյան, (առցանց),
Եվա Արևիկյան, (առկա),
Իրինա Գեյկո, (առկա),
Սարգիս Բաղալյան, (առկա),
Վասկեն Յակուբյան,(առցանց),
Տիգրան Հարությունյան, (առցանց):

Նիստին չեն մասնակցել՝
Արսեն Գալստյան,
Լիլիթ Մինասյան:

Ռուբեն Հարությունյանը չի մասնակցել 7-րդ, 8-րդ և 9-րդ հարցերի քննարկմանը:

Նիստին մասնակցել են հոգաբարձուների խորհրդի տասնմեկ անդամից ինը, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը:
Առանց ձայնի իրավունքի նիստին մասնակցել են.
Դավիթ Սահակյանը (գործադիր տնօրեն), (առկա),
Տեր Մեսրոպ քհն. Արամյան («Այբ» դպրոցի ՀԽ-ի հիմնադիր նախագահ), (առկա)
Ռիմմա Անանյան, («Այբ» դպրոցի ՀԽ-ի նախկին անդամ) (առկա),
Մերի Հովսեփյան (Ակադեմիական գծով տնօրեն), (առկա), (մասնակցել է հարց 5-ին),
Հայկ Պողոսյանը (Գործառնական տնօրեն), (առկա), (մասնակցել է հարց 7-ին),
Նելլի Բալայան (Ֆինանսների կառավարիչ), (առկա), (մասնակցել է հարց 7-ին),
Գոհար Հովհաննիսյան («Այբ» կրթական հիմնադրամի գործադիր տնօրեն), (առկա), (մասնակցել է հարց 7-ին, 8-ին և 9-ին)

Նիստի քարտուղար ընտրվեց Սիրանուշ Սուքիասյանը, (առկա):

Հարց 1. Օրակարգի հաստատում: Հարցեր, որոնք այս օրակարգում ընգրկված չեն եղել: Որոշում՝ հարց 1 *Որոշվեց.* *1. հաստատել ՀԽ-ի նիստի 2023 թվականի սեպտեմբերի 28-ի օրակարգը:* *2. Ավելացնել հարց 9. Արցախից տեղահանված երեխաների ուսման հնարավորություն «Այբ» դպրոցում:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 2. Նախորդ նիստից անցած ժամանակահատվածում դպրոցի աշխատանքների մասին հակիրճ տեղեկություններ:
Հարց 3. «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 7 /յոթ/ դասային խմբերի ներդասային ընտրությունների կանոնակարգի փոփոխություն:
Որոշում՝ հարց 3 *Որոշվեց հաստատել «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 7 /յոթ/ դասային խմբերի ներդասային ընտրությունների կանոնակարգը նոր խմբագրությամբ ըստ Հավելված 4-ի:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 4. Ընդունելության կարգի փոփոխություն (լրացուցիչ ընդունելության ընթացակարգի փոփոխություն):
Որոշում՝ հարց 4 *Որոշվեց հաստատել «Այբ» դպրոցի ընդունելության կարգի փոփոխությունները ըստ Հավելված 5-ի:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 5. Վերլուծել ԱԲ առարկաների քննությունների արդյունքների դինամիկան և քաղված դասերով ներկայացնել սեպտեմբերի նիստին:
Հարց 6. ՀԽ-ի հանձնարարությունների կատարման հաշվետվություն/ 2021 թվականի սեպտեմբերից սկսած:
Որոշում՝ հարց 6 *Որոշվեց Հավելված 6-1-ի 31 և 68 կետերը համարել հաստատված, իսկ 53 կետը չեղարկել:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 7. 2022-2023 ուսումնական տարվա ֆինանսական հաշվետվություն և 2023-2024 ուսումնական տարվա բյուջեի հաստատում:
Որոշում՝ հարց 7 *Որոշվեց.* *1. Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա բյուջեն (ըստ հավելված 7-1-ի) որպես աշխատանքային՝ դեկտեմբեր ամսին վերանայելու պայմանով:* *2. Պայմանավորված երկրի ներկայիս իրավիճակով՝ վարձատրության քաղաքականությանը վերաբերող երեք սցենարների առաջարկի վերաբերյալ որոշում չկայացնել՝ այն քննարկելով դեկտեմբերին:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 8. Կազմակերպչական կառուցվածքի արդյունավետության գնահատում: Դպրոցի և հիմնադրամի որոշ գործառույթների համատեղման հնարավորություն:
Որոշում՝ հարց 8 *Որոշվեց ստեղծել «Այբ» հիմնադրամի և «Այբ» դպրոցի համատեղ աշխատանքային խումբ: Դպրոցի կողմից աշխատանքային խմբի մեջ են ներառվել Սարգիս Բաղալյանը, Տիգրան Հարությունյանը և Դավիթ*

Փախչանյանը: ՀԽ-ի մյուս անդամները կարող են ինքնաառաջադրվել Whats Up հարթակի միջոցով: Հաջորդ նիստին զեկուցել: Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 9. (Արցախից տեղահանված երեխաների ուսման հնարավորություն «Այբ» դպրոցում):
Որոշում՝ հարց 9 *Որոշվեց.* *1. Արցախից բռնի տեղահանված երեխաների համար 1-ից 9-րդ յուրաքանչյուր դասարանում հատկացնել հավելյալ երկու տեղ:* *2. Արցախցիների հատուկ ընդունելության կարգը/ձևաչափը և ժամկետները կհաստատի Ընդունող հանձնաժողովը:* *3. Արցախից երեխաներին հատկացված հատուկ տեղերն ազատվելու դեպքում դրանք կարող են օգտագործվել միայն նույն նպատակով:* *4. Արցախցի երեխաների ծնողների հետ ստորագրել ուսումնառության պայմանագրեր 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ գնով՝ որը չի ներառում տրանսպորտային փոխադրումը տանից դպրոց և/կամ հակառակ ուղղությամբ:* *5. Ավագ դպրոց յուրաքանչյուր դիմող աշակերտի համար որոշում կկայացվի ՀԽ-ի կողմից՝ տնօրենության ներկայացմամբ:* **Հանձնարարություն.** Դավիթ Սահակյանին՝ ԸՀ քննարկումների օրվա մասին տեղեկացնել ՀԽ-ի անդամներին՝ ցանկության դեպքում քննարկմանը մասնակցելու համար: Որոշումը կայացված է միաձայն:
Կետ 10. ՀԽ-ի հաջորդ նիստին առաջարկվող հարցեր: **Բոլոր հարցերը ներկայացնել ՀԽ-ի նոր կազմի կողմից որոշված ՀԽ-ի նիստի ժամանակ, եթե այլ բան չի նշված հանձնարարության վերաբերյալ:**
Կետ 11. Նիստի ավարտ **Հանդիպումն ավարտվեց ժամը 13:25-ին:**

ՀԽ նախագահ

Ռուբեն Հարությունյան _____

Նիստի քարտուղար

Սիրանուշ Սուքիասյան _____